



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱԿՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

12 հոկտեմբերի 2017 թվականի 64-Ա

ԿՈՐՅՈՒՆ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆԻՆ ՀԵՐԹԱԿԱՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ
ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 159-րդ և 162-րդ հոդվածներով՝ «Աչաջրի առողջության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Կորյուն Վարդապետյանին ս/թ հոկտեմբերի 16-ից նոյեմբերի 14-ը ներառյալ տրամադրել ամենամյա հերթական արձակուրդ՝ 20 աշխատանքային օր և լրացուցիչ արձակուրդ 2 աշխատանքային օր:

«Աչաջրի առողջության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատարի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում տնօրենի պարտականությունները դնել ընտանեկան բժիշկ Վարդիթեր Իսկանդարյանի վրա:



Հ. ԱՐՈՎՅԱՆ

12 հոկտեմբերի 2017թ.
ք. Իջևան